

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ  
ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
1920-ԱԿԱՆ ՔՐ. ՍԿԶՐԻՆ

Է. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

1918—1920 թթ. Անդրկովկասում պատերազմի արհավիրքներին ավելացան ազգամիջյան ընդհարումներն ու ջարդերը: Թուրքական և ադրբեջանական գործակալների կողմից Հայաստանի թաթար (ադրբեջանցի) բնակչության շրջանում կազմակերպած և հրահրած խռովությունները շտապարեցին Հանրապետության գոյության ողջ շրջանում: Դրանց նպատակն էր քայքայել և թուլացնել Հայաստանի անկախ պետությունը, հող նախապատրաստել այն զավթելու, դրանով վերացնելու Թուրքիայի և Ադրբեջանի տարածքային բաժանումը: Թուրքիան և Ադրբեջանը տարածքային պահանջներ էին ներկայացնում Հայաստանի: Հանրապետության մի շարք մասերի՝ Կարսի, Լեռնային Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի, Շարուրի, Իարալագյազի, Իսասարգեչարի նկատմամբ: Իրենց նպատակին հասնելու համար թուրքական գործակալները և Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչները քայքայիչ գործունեություն էին ծավալում և նենգ դավեր նյութում:

1918 թ. վերջից Հայաստանից թուրքական զորքերի հեռանալուց հետո այնտեղ մնացին ոչ քիչ թվով սպաներ, որոնք ունեին զինված ջոկատներ՝ խռովություններ կազմակերպելու համար: Միաժամանակ, թուրքերի հեռանալուց հետո ադրբեջանական բնակչության զգալի մասը հեռացավ իր բնակավայրերից, վախենալով, որ հայերը կպատժեն թուրքերին օգնելու, զանազան մատնություններ անելու համար: Հեռանալուց հետո թաթարները կաղամակերպեցին ավազակախմբեր և սկսեցին թալանչիական գործողություններ սահմանակից հայկական գյուղերի ու զորամասերի նկատմամբ: Հայաստանի Հանրապետությունը ստիպված դիմեց բռնի միջոցների և կարճ ժամանակամիջոցում ճնշեց թուրք-թաթարական խռովությունները:

Միաժամանակ, առաջին աշխարհամարտի և ազգամիջյան ընդհարումների ընթացքում մեծ թվով հայեր արտագաղթեցին Ադրբեջանից (շուրջ 300 հազար մարդ)<sup>1</sup>: Նրանց հիմնական մասը բնակություն հաստատեց Արևելյան Հայաստանում, իսկ մյուս մասը Վրաստանի վրայով անցավ Հյուսիսային Կովկաս: Մուսաֆաթական իշխանության տարիներին հայերի հետ Ադրբեջանից արտագաղթում էին նաև այլ ազգություններ: Միայն 1918—1919 թթ. արտագաղթի պատճառով Ադրբեջանի ընդհանուր բնակչությունը պակասեց 401,5 հազար մարդով<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Է. Քաջագունի, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 12:

<sup>2</sup> Տե՛ս Վ. Խոջարեկյան, Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը (1828—1978), Երևան, 1979, էջ 190:

Այսպիսով, 1918—1920 թթ. Հայաստանի Հանրապետության լուրջ ներդրումներից մեկն էլ երկրի հայացումն էր, այնտեղից կովկասյան թափարների վնդելը:

Դժբախտաբար դա երկար շտեկաց. Հայաստանի խորհրդայնացումից հետո բոլշևիկները, առաջնորդվելով այսպես կոչված լենինյան ազգային քաղաքականության «վեհաշուք» կարգախոսներով, ժողովուրդների կարծեցյալ իրավահավասարության, ինտերնացիոնալ բարեկամության կեղծ գաղափարներով, կրկին փոխեցին հանրապետության ժողովրդագրական պատկերը: Վերադասի ցուցումներով պարտադրվեց ժամանակին Հայաստանից հեռացած ազգային փոքրամասնությունների վերաբնակեցման արագ իրագործում: Հայ բոլշևիկները ոչ միայն շրջադիմացան, ընդհակառակը բոլոր հնարավորությունները օգտագործեցին նրանց, հատկապես Կովկասի թաթարներին Հայաստանում վերաբնակեցնելու, կենսագործունեության համեմատաբար ավելի արտոնյալ պայմաններ ստեղծելու համար: Առաջ անցնելով նշենք, որ նորաստեղծ իշխանության ազգային քաղաքականությունը իրագործվում էր հայ ժողովրդի հաշվին, և ըստ արժանվույն չգնահատվեց թե՛ ազգային փոքրամասնությունների և թե՛ հարևան հանրապետությունների կողմից:

Փաստորեն, այսօր պատմության հեռավորությունից դիտարկելով հայ բոլշևիկների այդ քաղաքականությունը, գտնում ենք, որ ազգային տեսակետից ևս դա խրախուսելի չէր: Միաժամանակ հավատարիմ մնալով պատմաբանի կոչմանը, սույն հոդվածում փորձել ենք ներկայացնել կատարված դեպքերի իրական ընթացքը:

1921—1922 թթ. սկսվեց Հայաստանից հեռացած ազգային փոքրամասնությունների վերադարձը, որը ծանր վիճակի մեջ դրեց կառավարությանը: Հանրապետությունը լեցուն էր բազմահազար անօթևան գաղթականներով, հայ գյուղացիների մեծ մասը շուններ սեփական հողակտոր, անասուններ, գյուղգործիքներ, սերմացու, և ահա հարկավոր էր տեղավորել նորեկներին: Այսպես, 1922 թ. մայիսին մեծ թվով հայեր Թավրիզից չէին կարողանում Հայաստան վերադառնալ սակավահողության պատճառով: Նրանք դիմել էին Հայաստանի կառավարությանը և ժամանակավորապես մերժում ստացել<sup>3</sup>: 1923 թ. օգոստոսի 22-ին Հայաստանի ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատը (ՆԳԺԿ-ն) Նախիջևանի մարզխորհրդի գործկոմին խնդրում է Թավրիզի 300 հայ գաղթականներին՝ Ագուլիսի և Զուլֆայի բնիկներին, տեղավորել Նախիջևանում<sup>4</sup>:

1923 թ. Մեղրիի շրջանի բնիկները դիմում են տեղական իշխանություններին՝ թույլատրելու արտագաղթել սակավահողության պատճառով: Նրանցից շատերը մեկնեցին էջմիածնի շրջան՝ մասնակցելու Սարդարապատի ջրբանջի կառուցմանը: Այնտեղ նրանք ապահովվեցին հողով և բնակարանով<sup>5</sup>: Նույն 1923 թ. Անդրկասպյան երկրներում գտնվող նախկին մեղրեցիները իրենց լիազոր ներկայացուցիչ Անաստաս Գաբրիելյանի միջոցով դիմում են Հայաստան վերադառնալու խնդրանքով: Հայաստանի կառավարությունը չկարողացավ նրանց տեղավորել հայրենի շեններում և թույլատրեց վերաբնակվել էջմիածնի գավառի Մեծ Ծահրիրար գյուղում<sup>6</sup>: Դադարեցվում է Հյուսիսային Կովկասից հայ բնակչության վերաբնակեցումը, քանի որ «Հայաստանի տրև-

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ Նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև ՀՀ ՆՊԳԿԱ), ֆ. 112, ց. 1, գ. 5, թ. 74, գ. 95, թ. 26:

<sup>4</sup> Տե՛ս Աույն տեղը, գ. 95, թ. 26:

<sup>5</sup> Տե՛ս Աույն տեղը, գ. 70, թթ. 10, 12, 23:

<sup>6</sup> Տե՛ս Աույն տեղը, ֆ. 123, ց. 42, գ. 23, թ. 19—20:

տեսական ու պարենային վիճակը այնպիսին էր, որ իր տերիտորիայում ոչ մի նոր խումբ ընդունել չէր կարող»<sup>7</sup>:

Միաժամանակ սկսվել էր սփյուռքահայության վերադարձը:

Իսկ մյուս կողմից ադրբեջանցիները, որոնք հեռացել էին Զանգեզուրից, պահանջում էին իրենց վերաբնակեցնել միայն ու միայն նախկին վայրերում: Փաստորեն, Ադրբեջանի կառավարությունն ամեն գնով Հայաստան՝ իրենց «հայրենիք» էր վերադարձնում Ադրբեջան տեղափոխվածներին: Վրաստանում ապրող եզդիները դիմել էին Հայաստան վերադառնալու խնդրանքով: Նրանք Վրաստան էին մեկնել Կարսի մարզից (282 հոգի, 48 ծուխ) և ցանկանում էին վերաբնակվել Կոտայքի, էջմիածնի գավառներում, Աշտարակում<sup>8</sup>: Վերադարձան 1921 թ. Զանգեզուրի խորհրդայնացումից հետո կամովին Սիսիանի Բորիսովկա և Բազարչայ գյուղերից հեռացած մալականները<sup>9</sup>: Ի դեպ, երբ հիշյալ գյուղերի մալականները հեռանում էին Շամախիի գավառ, տեղական իշխանությունները ջանքեր գործադրեցին նրանց համոզելու՝ հրաժարվել նման մտադրույթունից: Սակայն ոչինչ չստացվեց: Նրանք պատասխանում էին. «Դուք էլ, դաշնակներն էլ հայեր եք, չենք հավատում Ձեզ և չենք ուզում մնալ այս երկրում»<sup>10</sup>: Նշենք նաև, որ մեկնելուց առաջ նրանք հիմնականում վաճառել էին իրենց ունեցվածքը, բնակարանները: Այդ գյուղերում վերաբնակվել էին գաղթականներ կամ էլ շրջակա գյուղերից եկած հողագործ կամ սակավահող գյուղացիներ: Այժմ վերադարձել էին նախկին բնակիչները և պահանջում էին իրենց վաճառածը անվարձահատույց նորից վերադարձնել:

1923 թ. Դիլիջանի գավառում ապրող մալականների մի մասը ևս հեռացավ Ռուսաստան: Նրանք մեկնելուց առաջ քարուքանդ էին անում իրենց տները: Հայաստանի ՆԳԺԿ-ն այդ ապօրինի քայլերը կանխելու համար ժողկոմխորհին առաջարկեց ազգայնացնել Ռուսաստան մեկնող մալականների բնակարանները<sup>11</sup>:

Այնուամենայնիվ, Հայաստանի կառավարությունը բոլոր միջոցները ձեռնարկեց ազգային փոքրամասնություններին նախկին բնակավայրերում տեղավորելու, հողով, շինանյութերով, բնակարաններով, վարկերով ապահովելու: ուղղությամբ: Նախապես նշենք, որ թե՛ հայերի և թե՛ ազգային փոքրամասնությունների ներգաղթը մեծ չափով սկսվել էր, սակայն 1920 թ. դեկտեմբերից մինչև 1921 թ. վերջը դրա վերաբերյալ ճշգրիտ հաշվառում չէր կատարվում: Այն հիմնականում կրում էր տարբրային բնույթ: Այդ իսկ պատճառով հնարավոր չէ ներգաղթողների ստույգ թվեր նշել:

Ներգաղթը կազմակերպելու համար Հայաստանում ՆԳԺԿ-ին կից 1922 թ. հունվարին ստեղծվեց էվակուացման բաժին<sup>12</sup>: Հիմնվեց նաև վերաբնակեցման Հայկական հանձնաժողով<sup>13</sup>: Հետագայում Հայաստանի Կենտրոնական նախագահության 1923 թ. հունվարի 30-ի որոշմամբ ՆԳԺԿ-ի կենտրոնական էվակուացման բաժինը վերակազմվում է վերաբնակեցման բաժնի<sup>14</sup>:

Ամեն ինչ արվում էր գաղթականների վիճակը բարելավելու համար: Կազմակերպվում էր նյութական, բժշկական օգնություն, հիմնվում էին սննդի

<sup>7</sup> Վ. Ե. Խոջաբեկյան, Աշխ., էջ 198:

<sup>8</sup> Տե՛ս ՀՀ ՆՊՊԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 138, թ. 50—51:

<sup>9</sup> Տե՛ս Աույն տեղը, գ. 35, թ. 3:

<sup>10</sup> Տե՛ս Աույն տեղը, գ. 136, թ. 10: Տե՛ս Աան ֆ. 123, ց. 16, գ. 112, թ. 3:

<sup>11</sup> Նույն տեղում, ֆ. 112, ց. 2, գ. 8, թ. 138:

<sup>12</sup> Տե՛ս Աույն տեղը, ֆ. 123, ց. 42, գ. 11, թ. 1:

<sup>13</sup> Տե՛ս Աույն տեղը, գ. 42, թ. 45:

<sup>14</sup> Տե՛ս Աույն տեղը, գ. 36, թ. 54, գ. 21, թ. 16:

կետեր<sup>15</sup>: Ադրբեջանցի գաղթականները Ղամարլուի հեղկոմին հայտնում էին, որ իրենք «Մակուում և Պարսկաստանում տեղական բնակչության կողմից ոչ միայն շարժանացան եղբայրական վերաբերմունքի, այլև զլխովին թալան-վեցին»<sup>16</sup>:

Սակայն վերաբնակեցման աշխատանքները կատարվում էին բավակա-նին դժվար պայմաններում: Ցանկացած դեպքում ավելի համարձակ, ինչու չէ՞ նաև իրատես քաղաքականություն վարելու դեպքում Հայաստանի կառա-վարությունը կարող էր պատերազմական վիճակի մեջ գտնվել հարևանների, մասնավորապես ադրբեջանցիների հետ: Բանն այն է, որ կարծես քիչ էր նորից ազգային փոքրամասնություններին Հայաստանում վերաբնակեցնելը, Ադրբեջանի միջամտությամբ Հայաստանում տեղավորված ազերիները փոր-ձում էին Հայաստանից անջատել նաև բնիկ հայկական հողեր և միացնել Ադրբեջանական ԽՍՀ-ին: Օրինակ, 1923 թ. Մեղրու Նյուվադի գյուղը փորձում է միանալ Զանգիլանի շրջանին: Մեղրիի շրջանի ներկայացուցիչը մեկնում է Նյուվադի՝ գյուղացիներին բացատրելու իրենց շար մտադրությունը: Այդ նույն ժամանակ Զանգիլանի շրջանի ղեկավար աշխատողները, այդ թվում շրջխորհրդի նախագահը, ինչ-որ ժողով էին գումարել՝ պահանջելով գյուղա-ցիներից մինչև վերջ պայքարել Նյուվադին Ադրբեջանին միացնելու համար: Նրանք նաև սպառնում էին Մեղրիի ներկայացուցչին, վախեցնելով ձերբա-կալությամբ: Ադրբեջանցիները հայտարարում են՝ այստեղ խորհրդային իշ-խանություն չկա, և թուրքից կոմունիստ լինել չի կարող<sup>17</sup>:

Մեղրիի շրջանի Շվանիձոր գյուղի մոտ գտնվող թուրքաբնակ Թղուտը և Առնաձորը 1923 թ. ևս փորձում էին շնթարկվել Հայաստանին<sup>18</sup>: Զբերալիի շրջանի գործկոմի նախագահը 1923 թ. սեպտեմբերի 16-ին Մեղրիի գավ-գործկոմին ուղարկած գրության մեջ նշում է, որ Թղուտը հպատակվում է իրենց: Նա պահանջում է գյուղի գործերին շմիջամտել<sup>19</sup>: Նախիջևանը պա-հանջում է Դարալազյազի հարավային հայաբնակ գյուղերը և Մեղրիի շրջա-նում գտնվող Կարճևան գյուղը<sup>20</sup>:

Ընդհանուր առմամբ 1920-ական թթ. սկզբին Զանգեզուրի 30 հայկական գյուղերի հարցը ադրբեջանցիների մեղքով դարձել էր վիճելի: Բանն այն է, որ Ադրբեջանի ներկայացուցիչները պահանջում էին տարածքային սահմա-նները կազմելիս ելնել գյուղերի ազգաբնակչության ազգային պատկանելու-թյունից<sup>21</sup>:

1923 թ. նոյեմբերի 30-ին կոռվա գավառի Վորոնցովկայի շրջանի Իլալ-մըլու գյուղի 38 ադրբեջանական ընտանիքներ դիմել էին գավգործկոմ՝ թույ-լատրել իրենց անասուններով և շարժական գույքով մշտական բնակության տեղափոխել Կարսի նահանգը: Ուսումնասիրությունից պարզվեց, որ արտա-գաղթի հիմնական պատճառը այսպես կոչված կլիմայական պայմանները, անբերրիությունը և Թուրքիայում ապրելու ցանկությունն էին<sup>22</sup>: Փաստորեն, մի կողմից վերաբնակեցում էր տեղի ունենում, իսկ մյուս կողմից իշխա-նությունները կանգնում էին արտագաղթի երևույթների առաջ:

Այսպիսով, Հայաստանի կառավարության վարած ազգային քաղաքա-

<sup>15</sup> Տե՛ս Աույն տեղը, գ. 11, թ. 4:

<sup>16</sup> Վ. Ե. Խոջաբեկյան, Աշվ. աշխ., էջ 105:

<sup>17</sup> Տե՛ս ՀՀ ՆՊՊԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 1, թ. 5:

<sup>18</sup> Տե՛ս Աույն տեղը, գ. 1, գ. 280, թ. 24, ց. 2, գ. 1, թ. 4:

<sup>19</sup> Տե՛ս Աույն տեղը, գ. 2, գ. 14, թ. 10:

<sup>20</sup> Տե՛ս Աույն տեղը, գ. 3, թ. 4:

<sup>21</sup> Տե՛ս Աույն տեղը, գ. 1, գ. 280, թ. 22:

<sup>22</sup> Տե՛ս Աույն տեղը, գ. 2, գ. 3, թ. 162:

կանությանը մեծապես խոչընդոտում էին սահմանային վիճելի հարցերը Ադրբեջանի և Վրաստանի հետ: Օրինակ, 1922 թ. սկսած այդպիսի վեճեր կային Ղազախի և Իջևանի շրջանների միջև՝ Ուզունթալա և Լալաքենդ գյուղերի համար<sup>23</sup>, Ղազախի և Ղարաբաղի<sup>24</sup>, Վրաստանի և Բարանայի շրջանների միջև<sup>25</sup> և այլն: Բազմաթիվ հեռագրեր են ուղարկվել Ադրբեջանի Ժողկոմիտեի նախագահ Հաջիևի անունով, դիմել են Անդրֆեդերացիայի ղեկավար մարմիններին<sup>26</sup>: Նման վեճերը հաճախ թանկ են նստել Հայաստանի վրա: Օրինակ, Քյարքի գյուղը (Վեդի Բասարում) Հայաստանի անվիճելի տարածքն էր, սակայն բռնակցվեց Նախիջևանին<sup>27</sup>:

Սահմանամերձ շրջաններում մեծ չափով տարածված էր թալանը, անասնազոդությունը, ճանապարհների շրջափակումը:

Այնպես որ շատ դեպքերում Հայաստանի կառավարության վարած ազգային քաղաքականությունը չէր գնահատվում կենտրոնի կողմից: Ընդհակառակը, փորձում էին այդ քաղաքականությունը միայն բացասական գույներով ներկայացնել: Այսպես, 1926 թ. դեկտեմբերին էջմիածնի գավառի Ուշի գյուղի բնակիչները Ադրբեջանի հողժողովմատի համաձայնությամբ պետք է տեղափոխվեին Ադրբեջան: Ուշեցիները նախապես լինում են տեղում՝ Նուխիի գավառի Զայքենդ գյուղում, ծանոթանում վիճակին: Նվ երբ արդեն կազմակերպված, իրենց ընտանիքներով պետք է տեղափոխվեին, նրանց Սվլախի կայարանից հետ են վերադարձնում: Հետո էլ հայտնում Անդրժողովուրդին, թե Հայաստանում ադրբեջանցիների հետ լավ չեն վերաբերվում<sup>28</sup>:

Նշենք, որ այդպիսի պատմություն տեղի ունեցավ 1948—1953 թթ., երբ Ադրբեջանի կառավարության պաշտոնական խնդրանքով՝ Կուր-Արաքսյան հողերը ոռոգելու և յուրացնելու նպատակով, Հայաստանի լեռնային փոքր և անհեռանկարային գյուղերի 11,2 հազար ադրբեջանցիներ վերաբնակվեցին Ադրբեջանում: Հետո նրանց մի մասը (2 հազար) վերադարձավ Հայաստան: Իսկ 1990 թ. Ադրբեջանից առաջադրված նախկին ԽՍՀՄ ժողպատգամավորները ԽՍՀՄ երագույն Գիտորհրդի նստաշրջանին դիմում ներկայացրին «Հայաստանի ադրբեջանական բնակչության բռնի տեղահանության մասին», որտեղ նենգափոխելով փաստերը, գրում էին. «Մեծ Հայրենական պատերազմի ավարտից հետո, 1948—51 թթ. հայրենադարձված հայերի համար հողատարածություն ազատելու լկտի պատրվակով, Ստալինի և Միկոյանի նախաձեռնությամբ, Հայաստանից բռնի տեղահանվեցին ավելի քան 100 հազար ադրբեջանցիներ, որոնցից շատերը, չդիմանալով ծանր փորձություններին, վախճանվեցին»<sup>29</sup>: Կարծում ենք, մեկնաբանություններն ավելորդ են:

Հայաստան տեղափոխված ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները 1923 թ. ազատվեցին հարկերից<sup>30</sup>: Նրանց արամադրվեց բազմակողմանի օգնություն հին բնակարանները վերանորոգելու, նորերը կառուցելու, գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվելու համար: Այսպես, 1924 թ. մարտի 14-ին ՀեՍՀ Կենտրոնական ուղարկած գրությամբ Զանգեզուրի գավառից հայտնում է, որ Ղափանում տեղավորված 920 ադրբեջանցիների համակողմանի օգնություն է կազմակերպվել: Միաժամանակ նշում է,

<sup>23</sup> Տե՛ս Աույն տեղը, ց. 1, գ. 5, թ. 7, 28:

<sup>24</sup> Տե՛ս Աույն տեղը, թ. 41:

<sup>25</sup> Տե՛ս Աույն տեղը, ց. 2, գ. 3, թ. 41:

<sup>26</sup> Տե՛ս Աույն տեղը:

<sup>27</sup> Տե՛ս Աույն տեղը, ց. 1, գ. 280, թ. 22:

<sup>28</sup> Տե՛ս Աույն տեղը, գ. 286, թ. 194, 197:

<sup>29</sup> «Бакпнекий рабочий», 23 сентября, 1990 г.

<sup>30</sup> Տե՛ս ՀՀ ՆՊՊԱ, ֆ. 112, ց. 5, գ. 88, թ. 5:

որ մինչև նրանց պրորբլեմների լուծումը գաղթականները օգնության խընդ-  
րանքով դիմել էին նաև Ադրբեջանի Կենտգործկոմին և ձեռնունայն մնացել<sup>31</sup>:

Միաժամանակ լուրջ մտահոգություն էր պատճառում Նախիջևանի հա-  
յության վիճակը: Ադրբեջանի ազգային քաղաքականության յուրահատու-  
թյուններից էր ազգամիջյան հարաբերությունների սրման պահերին ցեղա-  
սպանության սպառնալիքի տակ այնպիսի իրավիճակի ստեղծումը, երբ իր  
բնօրրանից բռնագաղթած բնակչությունն այլևս չկարողանա վերադառնալ  
նախկին բնակավայրը: Այդպես եղավ 1918—1920 թթ. Գանձակի և Նախիջե-  
վանի գավառներից Հայաստան եկած հայ գաղթականների հետ: 135,8 հազար  
փախստականներից իրենց բնակավայրերը վերադարձան միայն 8,3 տոկոսը  
(12830 մարդ)<sup>32</sup>: Այդ ճակատագիրն ունեցան նաև Շուշի քաղաքի հայ բնա-  
կիչները: Վիճակագրական տվյալներով հին հայկական մարզում՝ Նախիջե-  
վանում 1917 թ. ապրում էր 58,5 հազար հայ (բնակչության ընդհանուր թվա-  
կազմի 40 տոկոսը)<sup>33</sup>: Բայց արդեն 1926 թ. մարդահամարի տվյալներով այդ  
թիվը շուրջ 5 անգամ նվազեց՝ կազմելով ընդամենը 11276 մարդ<sup>34</sup>: Բանն  
այն է, որ 1918—1920 թթ. թուրքական զորքերի և մուսավաթական բանդա-  
ների կողմից կազմակերպված շարդից փրկված և իրենց տուն ու տեղը լը-  
քած նախիջևանցի հայերին Խորհրդային Ադրբեջանի և Նախիջևանի կենտ-  
գործկոմները 1922—1926 թթ. բազմիցս կայացրած հատուկ որոշումներով  
ամեն կերպ արհեստական արգելքներ հարուցեցին վերադառնալու իրենց  
բնօրրանը, թեև տները դատարկ էին, դռները փակ, հողերն անմշակ: Ադրբե-  
ջանական ԽՍՀ Ժողկոմխորհի նախագահ Մուսաբեկովը 1922 թ. հունիսի 24-  
ին Հայաստանի ԺԿԽ-ի նախագահին հղած հեռագրով հաղորդել է, որ Ադրբե-  
ջանի Կենտգործկոմի որոշմամբ «բնակչության մասսայական մուտքը Ա-  
դրբեջանի սահմանները» արգելվում է<sup>35</sup>:

1923 թ. Նախիջևանի մի քանի հայաբնակ գյուղերի բնակիչների ներ-  
կայացուցիչ Հազարապետ Մելիքյանը դիմում և՛ ուղարկո՞ւմ Վայաստանի  
Կենտգործկոմին կից սովյալների հանձնաժողովին: Այնտեղ նշվում է, որ  
Նախիջևանի հայաբնակ 3 գյուղերի 1360 բնակիչներ մատնված են սովա-  
մահության: Նրանք օգնության խնդրանքով դիմել են Ադրբեջանին, տեղական  
իշխանություններին, սակայն թուրք-թաթարները օգնության դիմաց նրանցից  
պահանջել են 15—16 տարեկան հայ զեղեցիկ աղջիկների կամ էլ պահանջել  
են ընդունել մահմեդականություն: Այլպես, ոչ մի թուրք չի կամենում ան-  
գամ մի ֆունտ գարի տալ: Շատերը ստիպված սնվում են վայրի խոտերով,  
շատերը մահանում են: Այս դիմումին կից ներկայացվում է բժշկական տե-  
ղեկանք: Նրանք Հայաստանից խնդրում են 3—4 ամսվա համար այլուր ու-  
ղարկել Նախիջևանի հայությանը: Դիմումի վերջում նրանք գրում են, որ ի-  
րենք կարող են գաղթել Հայաստան: Սակայն դա ուրախությամբ կընդունվի  
Նախիջևանի կառավարության կողմից: Իսկ իրենք երբեք չեն թողնի իրենց  
նախնիների գերեզմանները<sup>36</sup>:

Նախիջևանի ադրբեջանական իշխանությունները զենքի առգրավման ան-  
վան տակ ստուգումներ էին անցկացնում հայկական գյուղերում, տանում

<sup>31</sup> Տե՛ս Առյժ տեղը, ց. 1, գ. 136, թ. 10:

<sup>32</sup> Տե՛ս Վ. Ե. Խոջաբեկյան, Ցեղասպանությունը Ադրբեջանում («Հայաստան», օրա-  
թերթ, 1990 թ., Առյժեր 4):

<sup>33</sup> Տե՛ս Առյժ տեղը:

<sup>34</sup> Տե՛ս Առյժ տեղը:

<sup>35</sup> Տե՛ս Առյժ տեղը:

<sup>36</sup> Տե՛ս ՀՀ ՆՊՊԱ, ֆ. 112, ց. 1, գ. 5, թ. 76:

վերջի: որսորդական հրացանը, այն դեպքում, երբ ողջ հանրապետութունում տարածված էր բանդիտիզմը<sup>37</sup>:

Ազգային քաղաքականության բնագավառում հայ ազգաբնակչության համար նման պրոբլեմներ կային նաև Լեռնային Ղարաբաղում, Ադրբեջանի հայաշատ վայրերում և Վրաստանում:

Ազգային քաղաքականության բնագավառում վիճակը բարդանում էր նաև Երանոսով, որ փոքրամասնությունների մեծագույն մասին նախկին բնակավայրերում մեծ դժվարությամբ տեղավորելուց հետո 1924—26 թթ. նորից Հայաստան էին վերադառնում ուրիշները և պահանջում իրենց ևս տեղավորել: Իսկ գյուղերում այլևս ազատ տեղեր չկային: Վաղուց կազմվել և իրագործվել կամ իրագործվում էր հողաշինարարության ծրագիրը: Օրինակ, Զանգեզուրի տեղական իշխանությունները, հատկապես Գորիսի և Դարալագյազի գավազործկոմները բազմիցս դիմել են ԿԳԿ-ին, որպեսզի վերջինս նախիջևանի իշխանություններից պահանջի արգելել մուսուլման ազգաբնակչության մուտքը Զանգեզուր<sup>38</sup>:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ ազգային փոքրամասնությունները, հատկապես ադրբեջանցիները ամեն միջոցի դիմում էին, որպեսզի իրենց գյուղերի ավելցուկ հողերի վրա ուրիշներ, ոչ մուսուլմաններ չբնակեցվեն, նաև իրենց հարևանությամբ նոր գյուղեր չհիմնվեն<sup>39</sup>:

Ադրբեջանի կառավարությունը, որն սկզբից ևեթ ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարում էր ձուլելու քաղաքականություն, Հայաստանում ապրող իր հայրենակիցների միջոցով փորձում էր վարկաբեկել նաև հայոց կառավարությանը: Այսպես, 1925 թ. Դարալագյազի գավառի մի քանի թուրքական գյուղերի անունից Թիֆլիսում ԽՍՀՄ ԺԿԽ-ի նախագահ Լիկովին հանձնվում է բողոքագիր, որով Հայաստանի կառավարությունն ամբաստանվում էր հայաստանաբնակ ադրբեջանցիների նկատմամբ վարած իբր խտրական քաղաքականության համար: Նշվում էին այնպիսի գյուղերի անուններ, օրինակ, Կըսըր Խարաբա և այլն, որոնք երբեք գյուղություն չեն ունեցել<sup>40</sup>: Սահմանամերձ գավառներում ու շրջաններում սուազանում էին հողային վեճեր (օրինակ, Դիլիջանի և Ղազախի, Ղազախի և Ղարաբաղի, Զանգեզուրի և Քուրդիստանի միջև և այլն), որոնց հետևանքով հանրապետությունը կորցնում էր հողային տարածքներ<sup>41</sup>:

Չնայած վերոհիշյալ փաստերին, ազգային փոքրամասնությունների մեծագույն մասը վերաբնակեցվեց Հայաստանում, դարձավ նրա լիարժեք քաղաքացին: Մենք հեռու ենք կատարված աշխատանքները միակողմանիորեն ներկայացնելու միտումից, մասնավորապես երբ արդեն հանրապետությունում հաստատվում էր կոմկուսի ամենատիրությունը, հալածվում և հետապնդվում էին այլ կուսակցություններն ու նրանց անդամները, ազգային տրամադրությունները, փակվում էին վանքերն ու եկեղեցիները: Կուսակցական աշխատանքների մի մասը դեկլարատիվ բնույթ էր կրում: Կուսակցական մարմինները սկսել էին փոխարինել իշխանություններին: Բարձրագույնի ցուցումներով հանրապետական կոմկուսների կենտկոմներն ազգային փոքրամասնությունների քաղաքական, տնտեսական և մշակութային գործունեության մասին բազմաթիվ օրենքներ, որոշումներ ընդունեցին, մի շարք միջոցառումներ ձեռնարկեցին: Այնպես որ Հայաստանի ազգային փոքրամասնություն-

<sup>37</sup> Տե՛ս Առյուծ տեղը, գ. 11, թ. 87—89:

<sup>38</sup> Տե՛ս Առյուծ տեղը, գ. 126, թ. 43, 51:

<sup>39</sup> Տե՛ս Առյուծ տեղը, թ. 47:

<sup>40</sup> Տե՛ս Առյուծ տեղը, գ. 138, թ. 76:

<sup>41</sup> Տե՛ս Առյուծ տեղը, ց. 2, գ. 1, թ. 83:

ների կյանքի համար ավելի բնականոն և ապահով պայմաններ էին ստեղծվել: ԼԿ(բ)Կ Կենտկոմի ագրոպրոպագանդայի բաժնին կից գործում էր թուրքական սեկցիան<sup>42</sup>, իսկ Հայաստանի Կենտգործկոմին կից 1926 թ. ստեղծվեց ազգային փոքրամասնությունների հանձնաժողով՝ իր տեղական մարմիններով<sup>43</sup>: Փոքրամասնությունների շրջանում անընդհատ լուրջ ուսումնասիրություններ են կատարվել՝ ստուգելու նրանց տնտեսական, քաղաքական, կրթական, մշակութային կյանքը: Նրանց համար բացվում էին դպրոցներ, պատրաստվում ուսուցչական կադրեր, ուսուցումը և գրագրությունը կատարվում էր մայրենի լեզվով (1924 թ. մայիսի 11-ի որոշումով)<sup>44</sup>: Հրավիրվում էին ազգային փոքրամասնությունների անկուսակցական կոնֆերանսներ, քննարկում նրանց հուզող խնդիրներ, որոնք անպայմանորեն ուշադրության էին արժանանում Հայաստանի կառավարության կողմից: Այսպես, օրինակ, 1925 թ. դեկտեմբերի 30—31-ին Շամիրամ գյուղում տեղի ունեցավ էջմիածնի գավառի եզդիների անկուսակցական համագումարը, որը մի շարք որոշումներ ընդունեց եզդիներին նստակյաց դարձնելու, նրանց կրթամշակութային մակարդակը բարձրացնելու, կենցաղային պայմանները բարելավելու մասին: Որոշվեց անհանդուրժողականություն դրսևորել թայֆաբազուիայան, բազմակնություն, ամուսնության համար պահանջվող գլխագնի և այլ արատավոր երևույթների դեմ<sup>45</sup>: 1926 թ. մայիսի 23-ին կայացավ համահայաստանյան քրդական 1-ին համագումարը 75 պատգամավորների մասնակցությամբ: Այն քննարկեց գյուղատնտեսության և կոոպերացիայի, կրթամշակութային, կենցաղային և ընթացիկ հարցեր<sup>46</sup>:

1924 թ. դեկտեմբերի 13-ին Հայաստանի հողաշինարարության աշխատողների անդրանիկ խորհրդակցությունը նշեց, որ հանրապետության սահմաններում ազգային փոքրամասնությունների մեջ ոչ մի հողագուրկ, նաև սակավահող գյուղացի չկա<sup>47</sup>:

1926 թ. էջմիածնի գավառի կոմիտեի հանգամանորեն հետազոտեց Փոքր Շահրիար գյուղի հրեաների վիճակը, ծանոթացավ նրանց պահանջներին: Պարզվեց, որ գյուղի հրեաները 17 տնտեսություն են, 114 անձով, որ նրանք սեփական տներ չունեն, ապրում են վարձով, որ բոլորն էլ ապահովված են: հողով: Հրեաների վիճակի բարելավման նպատակով գավառի կոմիտեի մի շարք միջոցառումներ ձեռնարկեց, հատկացրեց երկարաժամկետ վարկեր<sup>48</sup>:

Մեծ ուշադրություն էր դարձվում նաև փոքրամասնությունների լուսավորության գործին: Համարյա ամենուրեք գործում էին դպրոցներ, նախադպրոցական և լուսավորական այլ հիմնարկներ, դրանց համար պատրաստվում և վերապատրաստվում էին կադրեր: 1924 թ. դեկտեմբերին Երևանում իրենց համագումարն անցկացրին ասորի և եզդի ուսուցիչները<sup>49</sup>: 1924 թ. Երևանի գավառում կար 18 ադրբեջանական, 5 ռուսական, 3 ասորական, 1 հունական, իսկ էջմիածնի գավառում՝ 2 ադրբեջանական, 1 եզդիական դպրոց<sup>50</sup>: Նույն 1924 թ. Երևանում կար նաև ադրբեջանական մանկատուն, 60

<sup>42</sup> Տե՛ս ԼԼ Բասարակական և քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվ (այսուհետև ԼԼ ՀՔԿ ՊԿԱ), ֆ. 1, ց. 2, գ. 141, թ. 11:

<sup>43</sup> Տե՛ս ԼԼ ՆՊՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 216, թ. 159:

<sup>44</sup> Տե՛ս Աույն տեղը, գ. 189, թ. 173—175:

<sup>45</sup> Տե՛ս Աույն տեղը, ց. 2, գ. 877, թ. 98—99:

<sup>46</sup> Տե՛ս Աույն տեղը, գ. 21, թ. 97—103:

<sup>47</sup> Տե՛ս Աույն տեղը, ց. 1, գ. 189, թ. 163:

<sup>48</sup> Տե՛ս Աույն տեղը, ց. 2, գ. 21, թ. 112:

<sup>49</sup> Տե՛ս Աույն տեղը, ց. 1, գ. 185, թ. 58:

<sup>50</sup> Տե՛ս ԼԼ ՀՔԿ ՊԿԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 20:



երբխաներով<sup>51</sup>: 1925—26 ուս. տարում էջմիածնի գավառում ազգային փոքրամասնությունների համար գործում էր 12 դպրոց, 421 աշակերտներով<sup>52</sup>; Հայաստանի կառավարության ջանքերով ստեղծվեց քրդական այրուբներ և այլն:

Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ միութենական մյուս հանրապետություններում ազգային փոքրամասնությունների հարցերն այդքան արագորեն չէին լուծվում, ինչպես Հայաստանում: Օրինակ, Վրաստանի կառավարությունը բազմիցս դիմել է Հայաստանին՝ տրամադրելու քրդերին լեզվով ցուցապաստաններ, խորհուրդների նախընտրական արշավը կազմակերպելու համար: Հայաստանից Վրաստան են մեկնել նաև քրդեր, ազրբեջանցիների շրջանում աշխատող բժիշկներ և այլ մասնագետներ<sup>53</sup>:

Անտարակույս, կային նաև պրոբլեմներ: Սակայն դրանք այնքան Հայաստանի կառավարության մեղքով չէին: Օրինակ, Ղկային ազգային լեզվով դասավանդող ուսուցիչներ, գյուղխորհրդի քարտուղարներ, և այդ գործը կատարում էին մոլլաները, իսկ ազրբեջանցիները բողոքում էին, որ իրենց ուշադրություն չեն դարձնում: Նույնը նաև դատարանների հարցում և այլն:

Հայաստանի իշխանությունների վարած ազգային քաղաքականությունը արտահայտվեց նաև ժողովրդագրական պատկերում: Զգալիորեն ավելացավ հանրապետության բնակչության թվաքանակը: Այդ մասին են վկայում ստորև 1923 թ. և 1926 թ. մարդահամարների տվյալները:

1. 1923 թ. մարդահամարի տվյալներով հանրապետությունում կային

Հայեր	— 593791	(84,9 տոկոս)
Ազրբեջանցիներ	— 54264	(9,9 տոկոս)
Ռուսներ	— 17133	(2,1 տոկոս)
Քրդեր	— 833	(0,7 տոկոս)
Եզդիներ	— 840	(0,8 տոկոս)
Հույներ	— 27	(0,45 տոկոս)
Ասորիներ	— 4523	(1,2 տոկոս)

Արանք հիմնականում 9 գավառների (Երևան, Ալեքսանդրապոլ, էջմիածին, Դիլիջան, Լոռի-Փամբակ, Նոր Բայազետ, Զանգեզուր, Դարուլագյալ և Մեղրի) տվյալներն են: Ընդամենը՝ 1057058 մարդ, որոշ տվյալներով՝ 1400000<sup>54</sup>:

2. 1926 թ. մարդահամարի տվյալներով հանրապետության ազգաբնակչության պատկերը հետևյալն է՝<sup>55</sup>

Հայեր	— 743,6 հազ. (84,5 տոկոս)
Ազրբեջանցիներ	— 76,8 հազ. (10 տոկոս)
Ռուսներ և ուկրաինացիներ	— 23,1 հազ. (2,6 տոկոս)
Քրդեր, եզդիներ	— 15,2 հազ. (1,7 տոկոս)
Ասորիներ	— 2,2 հազ. (0,5 տոկոս)
Հույներ	— 2,9 հազ. (0,7 տոկոս)

<sup>51</sup> Տե՛ս Առյուծ տեղը, գ. 150, թ. 37:

<sup>52</sup> Տե՛ս ՀՀ ՆՊՊԱ, ֆ. 112, ց. 3, գ. 355, թ. 124:

<sup>53</sup> Տե՛ս Առյուծ տեղը, ց. 1, գ. 418, թ. 8:

<sup>54</sup> Տե՛ս Առյուծ տեղը, ց. 3, գ. 384, թ. 8, 59:

<sup>55</sup> Նույն տեղում, գ. 377, թ. 51:

ինչպես տեսնում ենք, բոլոր ազգութիւնների աճ է նկատվում 1926 թ.-ին՝ 1923 թ. համեմատութեամբ: Նշենք նաև, որ բնակչութեան բնական և մեխանիկական աճի շնորհիվ կարճ ժամանակամիջոցում՝ 1921 թ. վերջերից մինչև 1926 թ. համամիութենական մարդահամարը, Հայաստանի բնակչութիւնն ավելացավ 22,3 տոկոսով<sup>56</sup>:

Այսպիսով, 1920-ական թթ. սկզբին Հայաստանից հեռացած ազգային փոքրամասնութիւնների մեծագույն մասը բոլշևիկյան կուսակցութեան հարկադրանքով վերաբնակեցվեց: 1926 թ. հարցման արդյունքներով Արևելյան Հայաստանից Ադրբեջան և Պարսկաստան արտագաղթած ադրբեջանցիների մոտավորապես 80 տոկոսը վերդարձել և բնակութիւն էր հաստատել իր նախկին բնակավայրում<sup>57</sup>: Միաժամանակ վերաբնակների հետ Հայաստան էին գալիս լրացուցիչ խմբաբնակներ, նրանց ազգականները: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ ազգային փոքրամասնութիւնները մասնակից դարձան հանրապետութեան հասարակական-քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին:

**Э. Г. ГЕВОРҚЯН — Национальная политика и национальные меньшинства Армении в начале 1920-х годов.**— Волнения, организуемые и провоцируемые среди азербайджанского населения Армении турецкими и азербайджанскими агентами, не утихали в течение всего периода существования Республики Армения. Она была вынуждена прибегнуть к силовым мерам. После советизации большевики предприняли возвращение выселенных из республики азеров, однако этот процесс осложнялся, в первую очередь, потому, что они требовали возвращения только на места их прежнего проживания, то есть туда, где уже были расселены армянские беженцы из Западной Армении и Азербайджана. Серьезное беспокойство внушали также спорные пограничные вопросы с Азербайджаном и Грузией, тяжелое положение армянского населения в Нахичеване, Нагорном Карабахе, в армянонаселенных районах Грузии и Азербайджана, разбой, грабежи, угон скота, блокада дорог и т. д. Тем не менее правительство Армении приняло все меры для благоустройства азеров, обеспечило землей, стройматериалами, предоставило ссуды. По результатам опроса 1926 года, подавляющая часть покинувших Армению нацменьшинств возвратилась.

<sup>56</sup> Տե՛ս Առլւմ տեղը, ֆ. 180, ց. 5, գ. 1853, թ. 1:

<sup>57</sup> Տե՛ս Առլւմ տեղը, ց. 6, գ. 197, թ. 37, 48, 49: